

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025թ. հունիսի 9-ի թիվ 42-Լ որոշման



ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝
Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

**ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՐԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

ԼՈՐԻ ԲԵՐԴ 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ՄԱՍ 1. ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	5
3. ՄԱՍ 2. ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լոռի Բերդ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ) համայնքի առաջիկա երեք տարիների զարգացման ռազմավարական ֆինանսական փաստաթուղթ է, որի հիմքում ընկած են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերով սահմանված համայնքի զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրերով որդեգրված առաջնահերթ ուղղությունները:

2026-2028 թվականների միջնաժամկետ հատվածում Լոռի Բերդ համայնքի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- **Գյուղատնտեսության բնագավառ.**

- Իրականացնել ոռոգման համակարգի կառուցման և արդիականացման աշխատանքներ՝ նվազագույնի հասցնելու համար անմշակ վարելահողերի քանակը: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է սուբվենցիոն ծրագրով իրականացնել ոռոգման համակարգի կառուցում

- **Տրանսպորտի բնագավառ.**

- Շարունակել ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքները՝ նվազագույնի հասցնելով ներհամայնքային անբարեկարգ ճանապարհների մակերեսը:

- **Քաղաքաշինության բնագավառ.**

- Քանի որ բոլոր բնակավայրերում հիմնականում լուծված է գիշերային լուսավորության հարցը, նախատեսվում է իրականացնել արդիականացման աշխատանքներ՝ տեղադրված էկոնոմ լամպերը փոխարինելով ժամանակակից էներգոխնայող լուսատուներով:

- **Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառ.**

- Ավելացնել աղբահավաքման պարբերականությունը:
- Ավելացնել բնակավայրերում տեղադրված աղբարկղների թիվը:

- **Կրթության բնագավառ.**

Պայմաններ ապահովել համայնքում նախադպրոցական կրթության զարգացման համար, ավարտել Ագարակ, Ուռուտ և Սվերդլով բնակավայրերի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները: Սուբվենցիոն ծրագրերով Յաղդան և Կողես բնակավայրերում գոյություն ունեցող շինությունների հիմնանորոգման միջոցով այդ բնակավայրերում ևս լուծել մանկապարտեզների խնդիրը: Համայնքի հինգ բնակավայրերում ունենալ գործող մանկապարտեզներ՝ բոլոր շահառուների համար հասանելի դարձնելով նախադպրոցական կրթությունը:

- Աջակցել համայնքում գործող դպրոցներին, նպաստել նրանց կողմից իրականացվող արդյունավետ ծրագրերին՝ տարբեր միջոցառումների և մրցույթների ընթացքում լավագույն արդյունքներ գրանցած աշակերտներին և նրանց ուսուցիչներին խրախուսելու համար դրամական մրցանակ տրամադրելու միջոցով:

- **Սոցիալ-մշակութային ոլորտներ.**

-Վերազինել համայնքային կենտրոնները, ստեղծել և ֆինանսավորել սպորտային և գեղարվեստի խմբեր, սպորտի զարգացումը խթանելու նպատակով ձեռք բերել անհրաժեշտ սպորտային գույք:

-Բոլոր բնակավայրերում բարեկարգված խաղահրապարակների կահավորման համար ձեռք բերել անհրաժեշտ գույք:

-Աջակցել համայնքում գործող բուժհաստատություններին:

-Աջակցել համայնքի ակտիվ երիտասարդների կողմից իրականացվող տարբեր մշակութային, ժամանցային, մարզական ծրագրերի իրականացմանը:

-Շարունակել դրամական խրախուսում տրամադրել կրթության, գիտության, արվեստի, սպորտի և այլ բնագավառներում հաջողություններ գրանցած երեխաներին և երիտասարդներին:

- **Համայնքային կառավարման ոլորտ.**

- Իրականացնել համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ, վերապատրաստումների միջոցով նպաստել ծառայող անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը:

ՄԱՍ 1. ԼՈՒԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Լոուի Բերդ համայնքի եկամուտների գոյացման աղբյուրները բաժանվում են երկու խմբի՝ սեփական եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ:

2024 թվականի Լոուի Բերդ համայնքի վարչական բյուջե մուտքագրված 377,9 մլն. դրամ եկամուտներից 167,3 հազ.դրամը բաժին է ընկել սեփական եկամուտներին, որից 44,6 մլն.դրամը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից վճարված ֆինանսական աջակցության գումարն է:

Վարչական բյուջեի հարկային եկամուտներում 2024 թվականին ամենախոշոր մասը բաժին է ընկել անշարժ գույքից գույքային հարկերին՝ 40635,8,1 հազ. դրամ:

Մնացած եկամուտների պատկերը հետևյալն է.

- փոխադրանիջոցների գույքահարկ- 22313,5 հազ.դրամ ,
- տեղական տուրքեր- 580,0 հազ.դրամ,
- վարչական գանձումներ- 11802,0 հազ.դրամ,
- վարձակալական վճար- 18899,4 հազ.դրամ,
- այլ եկամուտներ- 73134,7 հազ.դրամ, որից 44665,0 հազ. դրամը՝ «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից վճարված ֆինանսական աջակցության գումարն է:

Ֆոնդային բյուջեի եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումների և պետական բյուջեից ստացված սուբվենցիաների, որի գումարը կազմել է 41800,5 հազ.դրամ, հաշվին:

Լոուի Բերդի համայնքապետարանի 2026-2028 թվականների ՄԺԾԾ-ի կազմման հիքում ընկած է ինչպես նախորդ տարիների բյուջեի մուտքերի վերլուծությունը, այնպես էլ տարբեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջեին ամրագրված եկամուտների դրույքաչափերը և դրանցում կատարված փոփոխությունները:

2026-2028 թվականների եկամուտների իրատեսական կանխատեսումների համար հաշվի է առնվել նախորդ տարիներին տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձելիության մակարդակը, ինչպես նաև տվյալ բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Հիմք են հանդիսացել նաև համայնքապետարանի համապատասխան բաժինների կողմից ներկայացված տեղեկությունները ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային եկամուտների և գոյացած ապառքների վերաբերյալ: Առանձին հարկատեսակների գծով կիրառվել են եկամուտների կանխատեսման փորձագիտական և միտումների վերլուծության մեթոդները: Մասնավորապես հաշվի են առնվել.

- **անշարժ գույքի հարկի մասով.**

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված անշարժ գույքի հարկի դրույքաչափերը՝ հաշվի առնելով նաև, որ օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն 2021-2026 թվականների

համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Այս հարկատեսակի գծով ըստ տարիների նախատեսվել են հետևյալ եկամուտները.

2026 թվականին – 35000.0 հազ. դրամ

2027 թվականին – 36000.0 հազ. դրամ

2028 թվականին – 37000.0 հազ. դրամ

Եկամուտներ են պլանավորվել նաև հողի հարկի գծով՝ հաշվի են առնելով այդ հարկատեսակի գծով կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

- **փոխադրամիջոցների գույքահարկի մասով.**

Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի է առնվել համալքապետարանի համակարգչային բազանում գրանցված փոխադրամիջոցների գծով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված հարկի գումարները, ինչպես նաև կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

Վերոնշյալ հարկատեսակների պլանավորման համար հաշվարկներն իրականացվել են նաև հաշվի առնելով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների, դրանց առանձին խմբերի, ինչպես նաև հարկման որոշ օբյեկտների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունների սահմանման իրավասությամբ օժտված է նաև համայնքի ավագանին, որի սահմանած արտոնությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը և փոխադրամիջոցների գույքահարկի համար համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը, և այդ արտոնությունների գումարի դիմաց պետական բյուջեից լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

- **սեղական տուրքերի և վճարների մասով.**

Տեղական տուրքերի և վճարների գումարների պլանավորումը իրականացվել է հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված

գործողությունների և ծառայությունների համար Լոռի Բերդ համայնքի ավագանու 25.12.2024թ. թիվ 79-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերը :

• **վարձակալական վճարների մասով.**

Այս վճարի պլանավորումը իրականացվել է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված հողի և անշարժ գույքի վարձակալության պայմանագրերով սահմանված վարձակալական վճարների տարեկան հաշվարկի գումարների համաձայն:

• **այլ եկամուտների մասով.**

Այլ եկամուտների մուտքերը հիմնականում գոյանում են համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական և այլ տեխնիկայով մատուցված ծառայությունների համար համայնքի բյուջե մուտքագրվող գումարներից: Այդ ծառայությունների համար վճարների սակագները սահմանված են Լոռի Բերդ համայնքի ավագանու 13.01.2023թ. թիվ 6-Ա որոշմամբ:

Եկամուտների կանխատեսման ժամանակ վերլուծվել են դրանց կատարման գծով ռիսկերը, որոնք մեծապես կախված են հարկ վճարողների վարքագծից: Հարկ վճարողների վարքագծից կախված եկամուտների հավաքագրման ռիսկերը գնահատվել են միջին, որը կարող է մեղմվել իրականացվող վարչարարության արդյունավետության բարձրացմամբ:

Ստորև ներկայացվում է ըստ եկամտի տեսակների 2026-2028 թվականների համար վարչական բյուջեի եկամուտների կանխատեսումները՝ 2025 թվականի հաստատված և 2024 թվականի կանխատեսված բյուջեների ցուցանիշների համեմատական վերլուծությամբ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մուտքի անվանումը	2024թ. փաստ	2025թ. հաստ	2026 թ. կանխ.	2027թ. կանխ.	2028 թ. կանխ.	2026թ կանխ. և 2025թ. հաստ. բյուջեի տարբերություն.	
						գումար	տոկոս
ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	377 936,2	342 107,1	380 520,0	417 600,0	459 130,0	38 412,9	111,2
Գույքային հարկեր անշարժ գույքից	40 635,8	38 106,3	41 060,0	41 040,0	41 040,0	2 953,7	107,8
Գույքային հարկեր այլ գույքից	22 313,5	24 823,7	24 850,0	24 900,0	25 000,0	26,3	100,1
Տեղական տուրքեր	580,0	610,0	690,0	750,0	780,0	80,0	113,1
Պաշտոնական դրամաշնորհներ	210 580,8	238 193,1	269 700,2	304 700,0	344 300,0	31 507,1	113,2
հողի և գույքի վարձակ. եկամուտ	18 899,4	12 340,0	12 900,0	13 500,0	14 100,0	560,0	104,5
վարչական գանձումներ	11 802,0	7 934,0	9 170,0	9 510,0	10 710,0	1 236,0	115,6
մուտքեր տույժերից և տուգանքներից	0,0	100,0	150,0	200,0	200,0	50,0	150,0
այլ եկամուտներ	73 124,7	20 000,0	21 999,8	23 000,0	23 000,0	1 999,8	110,0

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների հավաքագրման ռիսկայնությունը մեծապես կախվածության մեջ կլինի հարկ վճարողների վարքագծից, որի զսպման/մեղմման նպատակով կիրականացվեն առավել արդյունավետ վարչարարական միջոցառումներ:

ՄԱՍ 2. ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Լոռի Բերդ համայնքի 2026-2028 թվականների ծախսերի պլանավորման հիմքում դրված են այն հիմնախնդիրները, որոնց լուծման առաջնահերթությունները ամրագրված են համայնքի զարգացման տեսլականում: Այդ նպատակով նախատեսվում են կատարել կապիտալ ծախսեր հետևյալ ուղղություններով.

- **Գյուղատնտեսության բնագավառ.**

Քանի որ Լոռի Բերդ համայնքը կազմված է միայն գյուղական բնակավայրերից, համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, որի զարգացումից է հիմնականում կախված բնակչության կենսամակարդակի բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար նախորդ տարիների ընթացքում ձեռք են բերվել տարբեր գյուղատնտեսական տեխնիկա և գյուղատնտեսական գործիքներ, որոնցով վճարովի ծառայություններ են մատուցվում ինչպես համայնքի, այնպես էլ հարակից բնակավայրերի հողօգտագործողներին: Բոլոր բնակավայրերում տեղադրվել են հակակարկտային կայաններ, որոնց գոյությունը որոշ չափով մեղմացրել է գյուղատնտեսության արդյունքների կախվածությունը եղանակային պայմաններից՝ ավելի գրավիչ և կանխատեսելի դարձնելով գյուղատնտեսությամբ զբաղվելը: Այս ամենի շնորհիվ համայնքում մի քանի անգամով ավելացել է մշակվող վարելահողերի քանակը:

Այժմ համայնքում գյուղատնտեսության զարգացման առաջնահերթ խնդիրը դարձել է հողատարածքների ոռոգման հարցը: Վերջին տարիներին կլիմայական պայմանների փոփոխության պատճառով ոռոգման ներքին ցանցերի կառուցման և արդիականացման հարցերը դարձել են օրակարգի կարևորագույն խնդիրները:

Վերը նշված հարցի լուծման համար 2027 և 2028 թվականներին նախատեսվել է սուբվենցիոն ծրագրերով իրականացնել ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքներ, յուրաքանչյուր տարի 150,0 մլն.դրամի չափով, որից 97,5 մլն. դրամը՝ սուբվենցիայի հաշվին:

- **Քաղաքաշինության բնագավառ**

Լոռի Բերդ համայնքի զարգացման գերակայություններից է նաև ներհամայնքային ճանապարհների կառուցումը: Այդ նպատակով նախորդ տարիներին բոլոր բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի միջոցով կատարվել են ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքներ: 2026-2028 թվականների ևս նախատեսվում է բոլոր բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերով իրականացնել ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման

աշխատանքներ՝ յուրաքանչյուր տարի 250, 0 մլն. դրամ գումարի չափով, որից 137,5 մլն. դրամը՝ սուբվենցիայի հաշվին:

- **Կրթության բնագավառ**

Նախատեսվում է ներդրումներ իրականացնել նաև նախադպրոցական կրթության զարգացման համար:

2022-2023 թվականներին հաստատված սուբվենցիոն ծրագրերով Ագարակ, Ուռուտ և Սվերդլով բնակավայրերի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները կավարտվեն 2025 թվականին և 2026 թվականին մանկապարտեզի գործող խմբեր կլինեն նաև Ուռուտ և Սվերդլով բնակավայրերում, իսկ Ագարակի մանկապարտեզում կբացվի ևս մեկ խումբ:

2027 թվականին նախատեսվում է սուբվենցիոն ծրագրերով Յաղդան և Կողես բնակավայրերում գոյություն ունեցող շինությունները հիմնանորոգել որպես մանկապարտեզ: Վերը նշված ծրագրի համար նախատեսվել է 80,0 մլն.դրամ, որից սուբվենցիա՝ 56,0 մլն.դրամ: Այս ծրագրի ավարտից հետո 2028 թվականին մանկապարտեզի խմբեր կբացվեն նաև Յաղդան և Կողես բնակավայրերում:

Մանկապարտեզի նոր խմբերի գործարկման պատճառով վարչական բյուջեում 2026-2028 թվականներին ավելացել է ինչպես մանկապարտեզի ծառայություններից օգտվելու համար վճարի գծով եկամտի, այնպես էլ վարչական բյուջեից նախադպրոցական կրթության գծով նախատեսված ընթացիկ դրամաշնորհի գումարը:

- **Կոմունալ ծառայությունների բնագավառ**

2025 թվականին մեկնարկել են KFW ծրագրի շրջանակներում Ուռուտ և Ագարակ բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները, որոնց համար սահմանվել է մեկ տարի ժամկետ: Վերը նշված աշխատանքների շնորհիվ այս բնակավայրերում անց է կացվելու խմելու ջրի ջրամատակարարման նոր ներքին ցանց, սակայն արտաքին ցանցը ևս ունի վերանորոգման կարիք: Այս նպատակով 2026 թվականին սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է իրականացնել Ուռուտ և Ագարակ բնակավայրերի ջրամատակարարման արտաքին ցանցի մասնակի նորոգում, որի ընդհանուր արժեքը կազմում է 250,0 մլն.դրամ, որից սուբվենցիա՝ 162,5 մլն.դրամ:

- **Սոցիալ-մշակութային ոլորտներ**

2026-2028 թվականներին համայնքային բյուջեից միջոցներ կհատկացվեն նաև մշակույթի և սպորտի զարգացման համար:

2026 թվականներին համայնքի բյուջեի միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել բնակավայրերի կենտրոնների բարեկարգում, որի համար նախատեսվել է 25,0 մլն. դրամ: Համայնքի բնակավայրերում բարեկարգված խաղահրապարակների կահավորման համար համայնքի բյուջեի հաշվին նախատեսվում է ձեռք բերել 4,0 մլն դրամ արժողությամբ անհրաժեշտ գույք: Նախատեսվում է համայնքային բյուջեի հաշվին ձեռք բերել նաև 2,0 մլն.դրամ արժողությամբ սպորտային գույք:

Ստորև ներկայացվում է 2026-2028 թվականների համար նախատեսված վարչական ծախսերը՝ 2024թ. հաստատված և 2025թ. կանխատեսված բյուջեների ցուցանիշների համեմատական վերլուծությամբ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մուտքի անվանումը	2024թ. փաստ	2025թ. հաստ	2026 թ. կանխ.	2027թ. կանխ.	2028 թ. կանխ.	2026թ կանխ. և 2025թ. հաստ. բյուջեի տարբերություն	
						գումար	տոկոս
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	307 929,1	342 107,1	380 520,0	417 600,0	459 130,0	38 412,9	111,2
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	113 008,8	176 589,4	178 500,0	184 850,0	185 350,0	1 910,6	101,1
Տնտեսական հարաբերություններ	67 774,6	30 200,0	30 400,0	30 800,0	31 400,0	200,0	100,7
Շրջակա միջավայրի պաշտպանություն	7 500,0	8 280,0	8 700,0	8 650,0	9 000,0	420,0	105,1
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	23 609,3	13 000,0	6 600,0	6 600,0	6 650,0	-6 400,0	50,8
Առողջապահություն	200,0		100,0	100,0	100,0	100,0	
Հանգիստ, մշակույթ և կրոն	3 916,0	11 700,0	12 050,0	11 400,0	11 250,0	350,0	103,0
Կրթություն	12 530,4	16 508,0	35 300,0	35 300,0	49 500,0	18 792,0	213,8
Սոցիալական պաշտպանություն	7 890,0	5 000,0	5 000,0	5 000,0	5 000,0	0,0	100,0
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	71 500,0	80 829,7	103 870,0	134 900,0	160 880,0	23 040,3	128,5

Ծախսային գործոնները, որոնք կանխատեսվող ժամանակահատվածում հնարավոր է, որ ազդեն համայնքում իրականացվելիք ծախսերի վրա հետևյալն են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 24-րդ կետով սահմանված՝ պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի ընդհանուր արժեքի չափաբաժնի փոփոխությունները
- Արտակարգ իրավիճակով կամ որևէ բնական երևույթով պայմանավորված նոր՝ չնախատեսված ծախսերի անհրաժեշտություն կամ պլանավորված եկամտի նվազումը,
- Տարբեր գործնառնություններով պայմանավորված արդեն իսկ նախատեսված ծրագրերի շահառուների թվի կտրուկ ավելացումը,
- Բոլոր այն ներքին և արտաքին ծախսային գործոնները, որոնք կարող են ազդել պետական բյուջեից ստացվող դոտացիաների, սուբվենցիաների և հատկացումների վրա,

- ՀՀ դրամի արժևորումը կամ արժեզրկումը, վառելիքի և շինանյութերի գների կտրուկ աճը, գնաճը, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների արտահանման կամ ներկրման սահմանափակումները, որոնք կարող են որևէ ազդեցություն ունենալ համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի վրա՝ դրանով պայմանավորված նաև կանխատեսվող ծախսերի վրա:
- Հնարավոր է լինեն նաև այլ ներքին և արտաքին գործոններ, որոնք ներկա պահին հնարավոր չէ կանխատեսել կամ որպես ռիսկ դիտարկել, որոնք, սակայն, կարող են էական բացասական ազդեցություն թողնել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ դրանով իսկ խոչնդոտելով կանխատեսվող ծախսերի կատարումը կամ նախատեսված ծրագրերի իրականացումը:

2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի համար, որպես առաջնահերթություն և գերակայություն է սահմանվում ավելի անվտանգ, բարեկարգ, կանաչապատ, էկոլոգիապես մաքուր, նորոգված ենթակառուցվածքներով, տնտեսապես զարգացած, հոգևոր, մշակութային, մարզական ակտիվ կյանքով ապրող և բարեկեցիկ բնակիչներով համայնք ունենալ: Առաջնահերթությունների թվում են՝ համակարգված աղբահանությունը, նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված առավել շատ երեխաների, համայնքային կյանքում երիտասարդների ակտիվ մասնակցությունը և այլն:

Համայնքում արտաքին ֆինանսական աջակցության չափեր և աղբյուրներ կանխատեսելն այնքան էլ իրատեսական չէ, քանի որ ներկա պահին առկա չեն հստակ պայմանավորվածություններ կամ արդեն իսկ կնքված պայմանագրեր ու համաձայնագրեր: Քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավումը, սոցիալական կայունությունը, առողջապահական և հակահամաճարակային արդյունավետ համակարգերի գոյությունը ներքին անվտանգության ապահովման համար ունեն առանցքային նշանակություն:

Համայնքը պետք է ակտիվ համագործակցի նաև տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ, դիմելով նաև այդ կազմակերպությունների կողմից հայտարարված դրամաշնորհներին: Միջազգային դրամաշնորհների և այլ ֆինանսական աջակցությունների միջոցով համայնքը միտված է զարգացնել հատկապես զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, կրթությունը, իրականացնել սոցիալական բնույթի և արևային էներգիայի կիրառմանն ուղղված ծրագրեր: